ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2019թ. թիվ 571-Ա

Ն.ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և 16-րդ հոդվածի 3-րդ մասի «է» ենթակետով, հիմք ընդունելով Լոռու մարզի դատախազի միջնորդագրում և ավագ քննիչ Է.Պողոսյանի «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» 15.04.2019թ. որոշման մեջ արձանագրված փաստերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաշվի առնելով, որ Ն.Մկրտչյանն իր գործառույթներն իրականացնելիս 2015-2017 թվականների ընթացքում պետությանը իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը, դադարեցնել Նառա Մկրտչյանի լիազորությունները և 2019թ. սեպտեմբերի 30-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի քարտուղարության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը եռօրյա ժամկետում հանձնել Ն. Մկրտչյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

[redacted]

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 30
ք.Վանաձոր